'ի զարդարանաց, և հրովարտակն մեր պարունակէ զգործ շինութեան, և ոչ մի իր ոք ունի յարաբերութիւն ընդ գործոյն Բեթղեհէմի, միայն խնդիր մեր այս է՝ որոյ ըստ հետ մտեալ էք, որովհետեւ ընկեալ են հրովարտակք Հայոց, նոցին իմաստիւք շինեալքն եւս խափանեալ են, ուստի քակտեսցին և աւերեսցին, և տեղին դարձցի 'ի վիճակն առաջին, եթէ կամք մեր և տենչանք այս էր, ընդէ՞ր ոչ այդպէս գրեցիք առ Հիւպատոսն, այլ՝ այլ ինն եղանակաւ ծանուցիք զգործն, պարտ է ծանուցանել զպատճառն՝ զի արձանագրեսցի։

Փոխանորդն Ցունաց ասէ. Բողոք և իսկական պահանջք մեր առ Հիւպատոսն՝ համաձայն է պատմութեան մերում, որ արձանագրեցաւ. իսկ գանկատն զՀամտուլլահ Դատաւորէն՝ որ ոչ գործադրեաց զհրովարտակն մեր, այսինքն ոչ կործանեաց զշինուածն, և Հիւպատոսն այնպէս իմացեալ է թէ՝ բովանդակ եղեալ իրքն ձեռամբ նորին՝ և 'ի չգործադրելոյ զհրովարտակն յաջողեալ է, եւ ինքն եւս այնպէս գրեալ։ Սակայն մեք 'ի նամակին գրեալ խնդրեցաք զկործանումն շինուածոց, և դարձումն 'ի վիճակն առաջին, եւ այժմ յայտնի եղեւ ճշմարտութիւնն առաջի մեր. և եղեալքն յեկեղեցին Բեթղեհէմի առանց հրովարտակի և հէօճէթի է, և միայն յեցեալ 'ի հրովարտակն բաժանորդութեան արարեալ են. շինութիւնք լերին Զիթենեաց հակառակ են հրովարտակաց, և նոքա եւս ընկեալ՝ զորութիւնքն խափանեալ են, ուստի խնդրեմք զկործանումն նոցին, և այսպէս գրեալ եմք առ Հիւպատոսն, (1838)։

Զարձանագրութիւն դատաստանական վիճաբանութեանս թարգմանեալ 'ի Տաճիկ բարբառոյ եղաւ 'ի կարգի պատմութեանս։